ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԲՄԱՇՁԲ-25/06>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան 18 օգոստոս 2025թ.

ժամը 16:30

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան/ԳԱՊ/,
անդամներ՝ Լուսինե Նավասարդյան/ԲԱ/, Արմինե Աբրահամյան/ԲԱ/, Հասմիկ Ղոնյան/ԳԱ/,
բացակա՝ Նարինե Գասպարյան/ԳԱ/
քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԲՄԱՇՁԲ-25/06>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին/շարունակություն/

(Ա. Սարգսյան)

1.Ընդունվել է ի գիտություն, որ 2025թ. օգոստոսի 18-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացվել է պատասխան՝ գնման գործընթացը սահմանված կարգով շարունակելու և հետևյալ քայլերը պահպանելու մասին.

-նախքան պայմանագրի կնքումը հանդես գալ(Պատվիրատուի ղեկավարը) տվյալ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ,

-հրապարակել և պահպանել հայտարարությունը համայնքապետարանի պաշտոնական կայքէջում,

-հրապարակված հայտարարության հղումը պատասխան գրությամբ ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

2.Հիմք ընդունելով <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված պատասխանը՝ հանձնաժողովը որոշեց.

2.1.հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

- <<Աժդանակ>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից 1-ին չափաբաժնի մասով,
- Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից 2-րդ չափաբաժնի մասով,

2.2.գնման ընթացակարգը շարունակել օրենքով սահմանված կարգով, ապահովել համապատասխան ծանուցումների և հայտարարությունների հրապարակումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ ---------- Ա. Սարգսյան

անդամներ ---------- Հ. Ղոնյան

---------- Ն. Գասպարյան

---------- Ա. Աբրահամյան

---------- Լ. Նավասարդյան

քարտուղար ---------- Լ. Ավետիսյան